

**ՄԻԻԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ  
ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ  
300-ԱՄԵԱԿԻ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆՆԵՐ**

*Մխիթարեան Միաբանութեան Հիմնադրութեան 300-ամեակին առիթով, 8-10 Սեպտեմբեր, 2000ին, Վենետիկի մէջ տեղի ունեցան բացման հանդիսութիւնները:*

*8 Սեպտեմբերին, Սբ. Ղազարի Մայրավանքին մէջ, Մխիթարեան բոլոր միաբաններու եւ հոծ հաւատացեալներու ներկայութեան, չորս երիտասարդ ժառանգաւորներ, պաշտօնապէս ուխտեցին անդամակցիլ Մխիթարեան Միաբանութեան: Թուականը խորհրդանշական էր, որովհետեւ Միաբանութիւնը հիմնուած էր Կ. Պոլիս, 8 Սեպտեմբեր 1700ին: Ուրախալի եւ քաջալերական երեւոյթ է անկասկած. որ սերունդները հերթաբար կու գան ապահովելու եւ զօրացնելու Մխիթար Վրդ. Սեբաստացիի 300ամեայ Միաբանութեան սրբազան առաքելութիւնը՝ նուիրուած Աստուծոյ եւ Հայ ժողովուրդի անսակարկ ծառայութեան:*

*Շաբաթ, 9 Սեպտեմբեր 2000ին, երեկոյեան ժամը 18:00ին, Վենետիկի Սբ. Մարկոսի մայր տաճարին մէջ, Մխիթարեան Միաբանութեան Ընդհ. Աբբահայր՝ Հ. Եղիա Մ. Վրդ. Քիլաղպեանի կողմէ մատուցուեցաւ Սրբազան Պատարագ: Այս առիթով, ծիսակատարութեան ներկայ էին Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ.ի ներկայացուցիչ Գերշ. Գիւտ Արք. Նազգաշեան, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Արամ Ա.ի ներկայացուցիչ Հոգշ. Տ. Նարեկ Մ. Վրդ. Ալեէմէզեան, Ամենապատիւ Տ. Ներսէս Պետրոս ԺԹ., Կաթողիկոս Պատրիարք*

կաթողիկէ Հայոց, Վենետիկի Պատրիարք Միրանաւոր Մարքոյ Չէ, Հայ, Լատին եւ Ղպտի եկեղեցիներու Սրբազան հայրեր, Եւրոպայէն եւ Միջին Արեւելքէն ժամանած բազմաթիւ ազգային հիւրեր եւ հաւատացեալներ: Օրուան քարոզիչն էր կարտինալ Մարքոյ Չէ, որ մեծապէս գնահատեց Մխիթարեաններու դարաւոր ներկայութիւնը քաղաքէն ներս եւ դրուատեց անոնց առաքելութիւնը՝ եկեղեցական, միջեկեղեցական, տպագրական, հրատարակչական եւ մշակութային ասպարէզներէ ներս: Ան անդրադարձաւ նաեւ վերջերս տեղի ունեցած Մխիթարեան Միաբանութեան զոյգ ճիւղերու միութեան, որ բացի պատմական մեծ եղելութիւն մը նկատելէ, շէշտեց կատարուած իրականութեան նշանակութիւնը եւ անոր դրական հետեւանքները: Սբ. Պատարագի քառածայն երգեցողութիւնը կատարեցին Պէյրութէն եւ Հռոմէն ժամանած Լեւոնեան Վարժարանի եւ Հայ Քոյրերու միացեալ երգչախումբը, խմբավարութեամբ Ալեքսանտր Միրանոսեանի եւ նուազակցութեամբ Երգեհոնահար Պերճ Ժամկոչեանի:

Կիրակի, 10 Սեպտեմբեր, 2000ին, կէսօրէ ետք, ժամը 15:30էն սկսեալ Մխիթարեան Մայրավանքին մէջ տեղի ունեցան պաշտօնական ձեռնարկները:

Վանքի նախկին տպարանի սրահին մէջ, յետ բացման արարողութեան, ներկայացուեցաւ Վենետիկի Մատենադարանի Հայ Մանրանկարչութեան Բ. հատորը, որուն շահեկան բովանդակութեան անդրադարձաւ Տոքթ. Զիլվաննի Մժիկեան: Ապա Տիկ. Սոնա Յարութիւնեան ներկայացուց իր իսկ կողմէ թարգմանուած եւ վերջերս հրատարակ իջած Ալեքսանտր Հերմէթ հայագրի հեղինակի «Հայերի Վենետիկը» հատորը, նուիրուած Մխիթարեան Միաբանութեան 300ամեակին:

Սրահին մէջ ցուցադրուած էին տպագրական գործիքներ, հայատառ աշխարհացոյց քարտէսներ, հնատիպ պատկերներ, որմազդեր, տոհմածառեր, վերջին տասնամեակին լոյս ընծայուած նշանակալից տպագրութիւններու նմոշներ, եւ Մխիթարեան Տպարանի ստացած գնահատական ութը վկայագիրները: Իսկ Մայրավանքի թանգարանին մէջ, այս առիթով ցուցադրուած էին Մխիթար Վրդ. Սեբաստացիի զգեստները եւ անձնական իրեղէնները, իր դասաւանդութեան դահլիճն ու գրասեղանը, ինչպէս նաեւ իրմէ հրատարակուած շուրջ յիսուն պատկառելի հատորները: Առանձին ցուցադարաններու մէջ ցուցադրուած էին Մխիթարեան կարեւորագոյն դէմքերուն

հրատարակութիւնները: Պատերու վրայ գետեղուած էին նաեւ Մխիթարեան մեծ դէմքերու իւղաներկ պատկերները:

Այս հանդիսութիւններուն առիթով, պատրաստուած էր երկլեզու գրքոյկ մը, որ հակիրճ կերպով կը շօշափէր Մխիթարեան Միաբանութեան 300ամեայ պատմութեան նկարագիրը, ոգին եւ վաստակը:

Հուսկ եկեղեցական եւ քաղաքական բարձրաստիճան հիւրերը եւ ժողովուրդը հաւաքուեցաւ Մայրավանքի եկեղեցին, ուր պաշտօնական ելոյթներ ունեցան Վատիկանի ներկայացուցիչ Գերպ. Բլաւոստիոյ Կոնճէրոթի, Ամենապատիւ Տ. Ներսէս Պետրոս ԺԹ. Կաթողիկոս Պատրիարք Կաթողիկէ Հայոց, Գարեգին Բ. Հայրապետի ներկայացուցիչ Գերշ. Գիւտ Արք. Նազգաշեան, որ Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմէ նորընտիր արբաճօր յանձնեց խորհրդանշական խաչքար յուշանուէր մը: Ապա Արամ Ա. Կաթողիկոսի ներկայացուցիչ Հոգշ. Տ. Նարեկ Ծ. Վրդ. Ալեէմէզեան փոխանցեց Վեհափառին գնահատական եւ շնորհաւորական խօսքերը: ՀՀ պետական արարողակարգի ծառայութեան վարչութեան պետ՝ Տիկ. Զարա Մարտիրոսեան կարդաց ՀՀ Նախագահ Տիար Ռոպերթ Քոչարեանի Մխիթարեան Միաբանութեան ուղղած շնորհաւորութեան պաշտօնական նամակը:

Պաշտօնական հիւրերու շարքին ներկայ էին Վենետիկի կուսակալը՝ Պրն. Վինչենցոյ Պարպաթի, Վենեթոյի Նահանգային խորհուրդի նախագահը՝ Պրն. էնրիքոյ Քավալիերէ, Վենետիկի Քաղաքապետարանի կողմէ Մշակութային կցորդը՝ Պրն. Մարինոյ Քորթէզէ, Իտալիոյ մօտ ՀՀ արտակարգ եւ լիազօր դեսպանը՝ Տիար Գագիկ Պաղտասարեան, ՀՀ կառավարութեան աւընթեր կրօնի գործերի կոմիտէի նախագահ՝ Պրն. Ռազմիկ Մարկոսեան, ՀՀ արտաքին գործոց նախարարութեան սփիւռքի վարչութեան պետ Պրն. Զիւան Մովսէսեան:

«Իտալիոյ Հայոց Միութեան» Նախագահ Պրն. Յակոբիկ Մանուկեան իտալերէն լեզուով անդրադարձաւ Միաբանութեան անցեալի ու ներկայի ներդրումներու մասին, շեշտելով Մխիթարեաններու ուսումնական եւ մշակութային իւրայատուկ դերը ազգային եւ եւրոպական շրջանակներէ ներս: Յարգելի բանախօսը վստահեցուց Մխիթարեան Միաբանութիւնը որ իր թիկունքին ունի հաւատաւոր համակիրներու բազմութիւն մը, որ ամէն կերպով նեցուկ պիտի ըլլայ միաբանական նոր ծրագիրներու մշակման եւ իրականացման:

Օրուան գլխաւոր զեկուցողն էր ՀՀ արտաքին գործոց նախարար՝ Տիար Վարդան Օսկանեան: Ան հանդամանօրէն խօսեցաւ Մխիթարեան Միաբանութեան գործունէութեան նշանակութեան մասին, անդրադառնալով անոր կրթական, ուսումնական, պատմագիտական, թարգմանական, մշակութային, ինչպէս նաեւ հայ նիւթական մշակոյթի բեկորներու հաւաքման եւ պահպանման անդնահատելի ծառայութեան շուրջ: Ան նկատեց որ Մխիթար Սերաստացին եղաւ եկեղեցւոյ առաջին հիմնադիրներէն, որ ազգային մշակոյթը դարձուց առաքելութեան գլխաւոր նպատակ եւ կատարուած գործին բովանդակութիւնը անուանեց «Մշակութային խիզախութիւն եւ հերոսութիւն»: Վերջապէս յիշեցուց որ Մխիթարի «Միաբանութեան ստեղծման ողջ գաղափարական հէնքը հայ ժողովուրդի լուսաւորութեան եւ ոգու վերագարթօնքն էր, որին ամբողջովին նուիրուեցին Մխիթարեանները»:

Եզրափակիչ ելոյթ ունեցաւ Միաբանութեան Աբրահայր Հ. Եղիա Մ. Վրդ. Քիլաղպեան, որ հայերէն եւ իտալերէն լեզուներով յատուկ շնորհակալութիւններ յայտնեց եկեղեցական եւ քաղաքական ներկայացուցիչներուն, հայ եւ օտար հիւրերուն, բոլոր ներկաներուն, ընդգծելով որ Միաբանութիւնը գիտակից է իր ստանձնած առաքելութեան եւ կը խոստանայ կատարել ամէն ինչ Մխիթարի ոգին վերարթեւորելու, զանիկա փոխանցելու եւ նոր թափ տալու Մխիթար Վրդ.ի ստեղծած շարժումին:

Ելոյթներուն յաջորդեց գեղարուեստական յայտագիր մը: Զուլթակահար Շուշան Սիրանոսեան (Ֆրանսայէն) նուագեց քանի մը հատուածներ քաղուած եւրոպացի հեղինակներէ:

Ապա տեղի ունեցաւ երգեհոնի համերգ, կատարողութեամբ Մասնաթոյ Պերճ Ժամկոչեանի (Boston Symphony Orchestra), արժանանալով հանդիսականներու գնահատանքին:

Հանդէսի աւարտին, ուրախութեան եւ գոհունակութեան ընդհանուր մթնոլորտի մէջ, բոլոր ներկաներուն մատուցուեցաւ ճոխ ընթրիք մը, դասական նուագի ընկերակցութեամբ:

Դիւան Մխիթարեան Միաբանութեան  
Վենետիկ Սբ. Ղազար - Իտալիա

ՎԵՆԵՏԻԿԻ ՊԱՏՐԻԱՐԲ ՄԱՐԳՈՅ ԶԷ  
 ԾԻՐԱՆԱԻՈՐԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՕՍՈՒԱԾ  
 ՀԱՅԱԾԷՍ Ս. ՊԱՏԱՐԱԳԻ ԸՆԹԱՑՔԻՆ  
 ՎԵՆԵՏԻԿԻ Ս. ՄԱՐԿՈՍ ՏԱՃԱՐԻՆ ՄԷՁ  
 9 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2000ԻՆ  
 ՄԽԻԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԳՐՈՒԹԵԱՆ  
 300-ԱՄԵԱԿԻ ԱՌԻԹՈՎ

Omelia di Sua Eminenza il Cardinale Patriarca Marco Cè durante la celebrazione eucaristica in rito armeno nella basilica di San Marco in Venezia, 9 settembre 2000

## NEL 3°CENTENARIO DELLA FONDAZIONE DELLA CIONGREGAZIONE MECHITARISTA

Basilica di San Marco, 9 settembre 2000

1. Sono felice di accogliere in San Marco, cuore religioso della città e della storia di Venezia, l'inizio solenne delle celebrazioni del terzo centenario della fondazione della Congregazione armena Mechitarista.

Saluto quindi le autorità civili e religiose dell'Armenia che sono presenti: Sua Beatitudine il Venerabile Patriarca Armeno, gli Arcivescovi e Vescovi, illustri rappresentanti del Governo Armeno.

Saluto tutti gli armeni qui convenuti dalla diaspora e dalla loro terra, tanto amata.

L'incontro degli Armeni con Venezia è molto anteriore alla venuta dell'Abate Mechitar nel 1715 e testimonia una intensità di legami, religiosi ed economici, costruita nei secoli. L'abate Mechitar è stato bene accolto dalla Serenissima e a Venezia la Congregazione Mechitarista, da lui iniziata a Costantinopoli nel 1700, è cresciuta e si è consolidata raggiungendo momenti di altissimo splendore.



60-2009

E' bello ricordare oggi, rendendone grazie a Dio, la figura splendida dell'abate Mechitar che, con tenace volere, in mezzo a infinite difficoltà, condusse a compimento l'intenzione, divinamente sostenuta, di raccogliere intorno a sé una famiglia monastica che conservasse la forma del monachesimo armeno, non senza però i tre voti essenziali dello stato religioso, anzi ad essi aggiungendone un quarto di apostolato.

Mechitar volle introdurlo espressamente nelle sue costituzioni e la Santa Sede lo aprovò: un voto che annunciava per la Congregazione un futuro di martiri e confessori della fede nei grandi momenti di prova per il popolo armeno. Di Mechitar voglio ricordare anche lo spirito ecumenico, fermento di comunione nella vita della Chiesa armena.

Grazie all'insediamento dei Mechitaristi, l'isola di S. Lazzaro, che è una perla nella laguna, è divenuta tra i maggiori centri di irradiazione della cultura armena, specialmente con la sua attività di stampa e di editoria. A Venezia viene stampato nel 1512 il primo libro in lingua armena.

Molte persone, tra le più rappresentative della storia armena, si sono formate proprio a Venezia. Era giusto, quindi, iniziare proprio qui le celebrazioni del 3° centenario.

Dalle reliquie di San Marco, discepolo del Signore, evangelista e martire, sale una grande benedizione sul futuro della Congregazione Mechitarista e sulla lontana patria armena: da qui, da San Marco, parta l'augurio - che è preghiera ed è attestazione di stima ed affetto - perché la Congregazione Mechitarista, grazie anche alla recente unione dei due rami, austriaco e veneziano, cresca e si incrementi, risplenda sempre d'una forte testimonianza evangelica e continui ad essere fucina di uomini illustri per santità e cultura, che onorino la loro patria e la loro tradizione.

2. La lettera agli Ebrei (12, 1-7) che abbiamo proclamato, intona la nostra speranza:

"Circondati da una moltitudine di testimoni, avendo deposto tutto ciò che è di peso e il peccato che ci assedia, corriamo con perseveranza nella corsa che ci sta davanti, tenendo fisso lo sguardo su Gesù, colui che dà origine alla fede e la porta a compimento. Egli, in cambio della gioia che gli era posta dinanzi, si sottopose alla croce".

La storia del popolo armeno ha conosciuto la croce, le grandi

sofferenze della persecuzione e della diaspora: per questo, a buon diritto custodisce nel suo cuore la certezza della risurrezione.

3. Nel Vangelo (Gv 14, 25-31) abbiamo ascoltato alcune parole di Gesù, tratte dal suo discorso dell'ultima cena. Esse sono rivolte anche a noi e sono parole di infinita dolcezza e di conforto.

Gesù, che è sempre con noi fine alla fine dei tempi, ci promette che il Padre ci manderà lo Spirito santo, il Consolatore: egli ci insegnerà ogni cosa e ci ricorderà quanto Gesù ha detto.

Dallo Spirito noi dobbiamo lasciarci condurre come dal maestro interiore il quale, non solo ci ricorda le parole di Gesù nella concretezza del nostro "oggi" quotidiano, ma diventa la nostra forza per compierle: una forza che in noi stessi non troveremmo.

Gesù ci lascia la pace, la sua pace, e ci esorta a chiudere il cuore al turbamento e alla paura: perché lui tornerà da noi e sarà con noi. Proprio perché è presso il Padre. Gesù è sempre con noi con una prossimità incomparabile.

E se Gesù è con noi, niente potrà nuocerci.

In questa certezza della presenza continua del Risorto nella nostra vita sta la nostra forza.

Solo così prenderemo il largo nel mare della storia e getteremo le reti nel nostro futuro. Queste parole di Gesù siano per il popolo armeno e la Congregazione Mechitarista fondamenti di sicura speranza.

4. Cari fratelli e sorelle armeni, siamo raccolti nella Basilica di San Marco: essa è stata testimone della vostra storia. Proprio qui vogliamo innalzare al Signore la nostra benedizione e il nostro ringraziamento.

Dio, Padre buono, che non abbandona mai i suoi figli, in questi tre secoli ha accompagnato il popolo armeno e i Mechitaristi in tutto il cammino che hanno fatto.

Raccolti ora intorno alla tomba di San Marco, discepolo di Gesù, evangelizzatore e martire, noi vogliamo vedere proprio nelle tre caratteristiche che qualificano la figura del grande protettore di Venezia, anche l'identità della Congregazione dell'abate Mechitar e la sua missione proiettata nel futuro.

E San Marco vi accompagni ogni giorno perché possiate essere fedeli alla vocazione con cui Dio vi ha chiamati.

Sulle pareti di questa Basilica, nei mosaici e nei bassorilievi, troviamo continuamente raffigurate la Vergine nel suo ruolo di orante e di Madre di Dio e, insieme ad essa, innumerevoli Santi dell'Oriente e dell'Occidente. Che Maria e tutti i Santi intercedano per voi e vi accompagnino nel vostro cammino di fedeltà al Signore e di fedeltà alla storia cristiana del vostro popolo.

Salga stasera, da Venezia e dal suo San Marco, una grande benedizione, raggiunga la vostra dolce terra, tutti i fratelli e le sorelle armene che vi abitano, le Autorità religiose e civili che guidano il vostro popolo; raggiunga tutti gli armeni sparsi nel mondo e custodisca nel loro cuore il sapore e la nostalgia della loro patria, e ancor più, della loro fede cristiana, che è il sale di ogni buon sentimento, umano e religioso, che abita nel cuore dell'uomo, secondo il progetto di Dio.

L'Abate Mechitar in tutta la sua vita fu animato dal desiderio e dall'impegno di raccogliere in unità i fratelli cristiani, segnati dallo stesso battesimo. Questa passione per l'unità, che lo animò, segni anche noi e pervada i nostri cuori consentendoci di raccogliere tutti gli Armeni in un abbraccio santo.

Vorrei chiudere con un umilissimo ricordo personale (mi sia concesso farlo, pochi giorni dopo la beatificazione del nostro Patriarca Roncalli, che amava, talora, concedersi a confidenze personali): il mio piccolo paese natio ha come protettore San Biagio, vescovo di Sebaste in Armenia, martire della fede.

Nel sermone che ascoltavo nella sua festa - il 3 febbraio, che era anche la sagra del paese - io sentivo parlare di Sebaste e dell'Armenia, che alla mia fantasia di bambino, risuonavano luoghi misteriosi.

Oggi mi trovo a onorare, nella Chiesa in cui il Signore mi ha chiamato a vivere, una grande figura di uomo di Dio e del Vangelo, nato proprio a Sebaste, una Congregazione religiosa da lui fondata e un popolo da cui tutto questo è fiorito.

Che il Signore, che tesse i fili della nostra storia, ci doni la gioia di godere della nostra fede che, in qualunque parte della terra, ci fa fratelli, raccogliendoci nella grande famiglia dei figli di Dio.

ՀՀ Արտաֆին Գործոց Նախարար՝ Տիար Վարդան Օսկանեանի արտասանած գառը Մխիթարեան Միաբանութեան հիմնադրութեան 300ամեակի բացման համդիսութիւններու առիթով Կիրակի 10 Սեպտեմբեր 2000ին, Վեներիկ Ա. Ղազարի մէջ

Ամենապատիւ Հոգեւոր Տէր,  
Գերապատիւ Արքահայր,  
Սրբազան Հայրեր,  
Հոգեշնորհ միաբաններ,  
Սիրելի հայրենակիցներ,  
Թանկագին եղբայրներ,

Այսօր նշանաւոր պատմական իրադարձութիւն է մեր ժողովրդի կեանքում, երբ Համայն Հայութիւնը խանդավառութեամբ, հպարտութեամբ ու պարծանքով նշում է Մխիթարեան Միաբանութեան Հիմնադրման 300-ամեակը:

Հայ ժողովրդի պատմութեան մէջ եզակի ու անզուգական այս հաստատութիւնը, կարելի է ասել, հայ քաղաքակրթութեան, յիրաւի, գլուխգործոցն է՝ հոգեւոր-մշակութային մի սքանչելի կոթող:

Ուստի, թոյլ տուէք, այս պատմական օրը սրտի անհուն բերկրանքով շնորհաւորել Մխիթարեան անդամներին եւ մեզ՝ բոլորիս:

Միաբանութեան յոբելեանը ինձ Համար ունի երկակի եւ առանձնակի նշանակութիւն, ոչ միայն որպէս Հայաստանի Հանրապետութեան արտաքին գործերի նախարար, այլ նրանով, որ ես բախտ եմ ունեցել Հալէպում ուսանել Մխիթարեան ուսումնական հաստատութիւնում, որը իր անզուգական դրոշմն է դրել իմ յետագայ կրթութեան եւ դաստիարակութեան վրայ:

Այս օրերին Միաբանութեան 300-ամեայ յոբելեանը առանձնակի շուք, իմաստ եւ բովանդակութիւն է ստանում յատկապէս նրանով, որ 227 տարուայ բաժանումից յետոյ

2000թ. յուլիսի 19-ի պատմական ժողովով կայացաւ Մխիթարեան Միաբանութեան վերամիաւորումը, որը եկաւ մէկ անգամ եւս հաստատելու Մխիթարեանների հեռատես իմաստութիւնը, փաստելու, որ միաբանութեան եւ միասնութեան այն առաքելական ոգին, որ դրել էր Մեծ Աբբահայրը Միաբանութեան ստեղծման հիմքում, սրբութեամբ պահպանուել է Վենետիկի եւ Վիեննայի միաբանների կողմից:

Վերամիաւորման փաստը ունի շատ աւելի մեծ խորհուրդ, եւ այն դուրս է գալիս Մխիթարեանների յարաբերութիւնների շրջանակից, այն ստանում է համազգային իմաստ եւ հնչեղութիւն, քանզի այսօր քան երբեւէ, բոլոր բնազաւառներում մեր ժողովրդի համար կենսական անհրաժեշտութիւն է համախմբուածութիւնը, միասնականութիւնը, պատմական ներկայ բարդ ժամանակահատուածում մեր ժողովրդին նետուած մարտահրաւէրներին դիմակայելու եւ հայ ժողովրդի բոլոր հատուածների առջեւ ծառայած վիթխարի խնդիրները լուծելու համար:

Ընդհանրապէս, այսօր պատմական պատկառելի հեռաւորութիւնից առաւել տեսանելի է դառնում Միաբանութեան բուն գաղափարը եւ նրա հիմնադրման փաստի հիմքում դրուած միասնականութեան կարեւորութիւնը:

Հայ ժողովրդի միութիւնը, միասնականութիւնը ազգային եւ հոգեւոր-մշակութային շրջանակներում այս է եղել Սեբաստացու գերագոյն նպատակը:

Նպատակադրուելով լծուել մեր ժողովրդի հոգեւոր, մշակութային, կրթական զարգացման գործին, Մեծ Աբբահայրը խորապէս հասկացել է, որ համազգային տարողութեան իւրաքանչիւր խնդիր լուծելու լաւագոյն միջոցը միասնականութիւնն է:

Սիրելի հայրենակիցներ,

Անգնահատելի ու անչափելի է Մխիթարեան Միաբանութեան դերն ու նշանակութիւնը մեր ժողովրդի հոգեւոր-մշակութային կեանքում:

Շնորհիւ Մխիթարեան Միաբանութեան Աւետարանական ճշմարտութիւններ է ճառագել մեր կեանքում, բացուել են մարդկային գիտութեան նորանոր ուղիներ, շառաւիղուել են հայոց պատմութեան, լեզուի, գրականութեան, արուեստների զարգացման էջեր:

Այստեղ իրենց կազմաւորման ընթացքն են ապրել մտաւորականներ, գիտնականներ, արուեստագէտներ, հոգեւոր-

րական թէ աշխարհական, այստեղ են իրենց տաղանդի փայլատակումներն ապրել շատ ու շատ գործիչներ, ստեղծելով հայ հոգու եւ մտքի դրսեւորման անզուգական գործեր:

Մխիթարեան Միաբանութիւնը Հայ հոգու եւ մտքի պատմութեան Ոսկեգոյն էջերից մէկն է, եւ ի բարեբախտութիւն մեր ժողովրդի, այսօր էլ այդ տարեգիրքը բաց է եւ գրոււմ են նորանոր ոսկէ տողեր ի փառս եւ ի զարգացում մեր ժողովրդի:

Մխիթարեան Միաբանութիւնը իր կոչումով, գործունէութեամբ, աներեւակայելի ձեռքբերումների շնորհիւ է, որ վերջին 300 տարուայ պատմութեան մէջ «Մխիթարեան» անունը դարձել է պարտադրող ներկայութիւն, մեր ժողովրդի հոգեւոր-մշակութային զարգացումների խորհրդանիշ: Եւ միանգամայն իրաւացի էր մեր ժամանակների հայ սփիւռքի խոշորագոյն դէմքերից մէկը՝ Վահէ Օշականը, երբ գրում էր. «...Մ. Ղազարը մեծագոյն բարիք է հայութեան համար: Մարդ չի կարող զսպել իր հիացումն ու հպարտութիւնը յանձին այն յամառ եւ հաւատաւոր աշխատանքին, որը պահպանում է հայ մշակոյթի արմատները եւ Սփիւռքի հիմերը: Վենետիկի Մխիթարեան հարստութիւնը ուլտրաճառագայթներ է արձակել չորս կողմը, ցիրուցան եղած, երկնող մարդկանց համար»:

Սիրելի հայրենակիցներ,

Խորհրդանշական է, որ Միաբանութեան 300-ամեակը զուգադիպում է Քրիստոնէութիւնը որպէս պետական կրօն հռչակելու 1700-ամեակին:

Միաբանութեան 300-ամեակի հանդիսութիւնները ոչ միայն յարգանքի տուրք է, այլեւ լաւագոյն հնարաւորութիւն անդրադառնալու եւ ներկայացնելու միաբանութեան հոգեւոր-մշակութային արժէքները, եւ մէկ անգամ եւս խօսելու մեր անցեալի, նրա պատմա-մշակութային արժէքների մասին, փորձել նորից իմաստաւորելու եւ գնահատելու այն ամէնը ինչ որ արուած է, որովհետեւ պատմութիւնը մնայուն ընթացք է, առանց նրա հնարաւոր ճանաչողութեան, իմացութեան եւ արժեւորման դժուար է առաջ տանել ներկան եւ կանխատեսել ապագան:

Այն առանձնապէս վերաբերում է Մխիթարեան Միաբանութեանը, քանզի գտնում եմ, որ հայ իրականութեան մէջ զանազան օբյեկտիւ եւ սուբյեկտիւ հանգամանքների պատճառով, մինչեւ օրս տրուած չէ այն մեծ գնահատականը, որին

արժանի է Միաբանութիւնը: Աւելին՝ վստահօրէն կարելի է նշել, որ Միաբանութիւնը ամբողջապէս ճանաչուած չէ մեր ժողովրդի կողմից: Մինչեւ օրս յաւուր պատշաճի գնահատականի արժանացած չեն Մխիթարեան Մեծազոյն Դէմքերը:

Ի դէպ, ցանկանում եմ ուրախութեամբ նշել, որ Միաբանութեան 300-ամեակին նուիրուած հանդիսութիւններ են տեղի ունենալու նաեւ Հայաստանում, որտեղ կ'անցկացուեն պետական եւ ակադեմիական միջոցառումներ, կատարուելու է Մխիթար Սեբաստացու յուշարձանի բացումը:

Բնականաբար բազմազան միջոցառումներ տեղի կ'ունենան նաեւ սփիւռքում:

### Միրելի հայրենակիցներ,

Այս հանդիսաւոր օրը խօսելով Մխիթար Սեբաստացու եւ Մխիթարեանների պատմական առաքելութեան մասին եւ որպէսզի առաւել տեսանելի լինի նրա դերն ու նշանակութիւնը հայ ժողովրդի պատմութեան մէջ, հարկ եմ համարում մի փոքր անդրադառնալ այն պատմական ժամանակահատուածին, երբ մեծ Սեբաստացին սկսեց իր գործունէութիւնը եւ հիմնադրեց Միաբանութիւնը:

Միանգամից ասեմ. հայ ժողովրդի երկու հատուածի համար էլ ծանր ու մռայլ էր պատկերը, պարսկա-թուրքական սահմանը այն մեծ անջրպետն էր, որ բաժանում էր մեր ժողովրդին երկու հատուածների: Սակայն հայ իրականութիւնը անտարբեր չէր այն ամէնի նկատմամբ ինչ կատարուում էր շուրջը եւ յատկապէս Եւրոպայում, իսկ այնտեղ արդէն թեւածում էր Լուսաւորութեան Ոգին եւ սկսում էր փայլուն մի շրջան. որը յայտնի է իբրեւ Լուսաւորութեան Դար:

Միաժամանակ հայ իրականութեան արեւմտեան եւ արեւելեան հատուածների կենսքում էլ տեղի էին ունենում շափազանց կարեւոր եւ հետաքրքիր իրադարձութիւններ, որոնց ընդհանուր տրամաբանութիւնը՝ մէկն էր՝ փորձել եւ գտնել ուղիներ ազգի վիճակը վերափոխելու եւ բարելաւելու համար:

Արեւելեան հատուածում Ղարաբաղի մի քանի Մելիքութիւնների լիազօրութեամբ Խորայէլ Օրին ճանապարհորդում էր Եւրոպայում, բախում Եւրոպական տէրութիւնների դռները, որպէսզի կարողանայ ազատութեան դուռ բացել մեր ժողովրդի համար: Ազատագրութեան փնտրտուքները նրան բե-

րեցին Ռուսաստան, եւ 1701 թուականին նա Մոսկուայում արդէն ծրագրեր էր մշակում Ռուսական արշաւանքի համար: Ղարաբաղը եւ Սիւնիքը սպասման մէջ էին, շուտով այնտեղ բռնկուելու էր մեր ժողովրդի ազգային-ազատագրական առաջին իսկական, կազմակերպուած պայքարը:

Արդ նոյն ժամանակ հասունանում էր հայ ժողովրդի հոգեւոր-մտաւոր, կրթա-մշակութային վերածննդի ու դաստիարակութեան փնտռութեանը, առանձին անհատներ փորձեր էին անում հայ ժողովրդին հաղորդակից դարձնել Եւրոպայի մշակոյթին:

Այսպիսով, Արեւելեան մասում ծաւալուում է քաղաքական-ազատագրական, Արեւմտեան մասում՝ հոգեւոր-մշակութային շարժումները: Եւ ահա արեւմտեան այս հոգեւոր-մշակութային շարժման Ռահվիրան դարձաւ Մխիթար Սեբաստացին:

Հարկ եմ համարում նշել մի շատ կարեւոր հանգամանքինչպիսին մեր ժողովրդի վիճակն էր՝ այն է մասնատուած, այդպէս էլ այդ շարժումների ճակատագիրը՝ անջատուած: Մի կողմում քաղաքական-ազատագրական շարժումն էր, միւս կողմում՝ հոգեւոր-մշակութայինը: Սակայն դրանք չմիացան միմեանց, մնացին կղզիացած, առանձին-առանձին:

Մխիթար Սեբաստացին եւ իսրայէլ Օրին միմեանց չէին ճանաչում, Սուրբ եւ Գրիշը չեն միանում, թէեւ երկուսն էլ հաւասարապէս հարկաւոր էին հայերին:

Ահա այսպիսի էր իրավիճակը, երբ պատմական ասպարէզ է իջնում մի խոշոր, վիթխարի դէմք՝ Մխիթար Սեբաստացին, եւ իր մի խումբ միաբաններով, իրենց վրայ վերցնելով չափազանց բարդ ու պատասխանատու առաքելութիւն՝ ապահովելու մի ժողովրդի հոգեւոր-մշակութային առաջընթացը, միջնորդ դառնալ Եւրոպայի եւ հայերի միջեւ:

1700թ. Սեպտեմբերի 8-ին Աստուածածնի Ծննդեան օրը, Մխիթարը հաւաքում է իր համախոհներին կապացիներն վանքի այն սենեակը, ուր նա թաքնուում էր հալածանքներից, բացատրում թէ ինչպիսի միաբանութիւն է ցանկանում ստեղծել, ներկայացնում իրավիճակը, որ ստեղծուած հանգամանքներում հնարաւոր չէ միաբանութիւնը հաստատել ոչ կ. Պոլսում, ոչ էլ Հայաստանում, եւ հարկ է ընտրել այնպիսի երկիր, որտեղ յարմարութիւններ կան վանք ու միաբանութիւն հաստատելու համար, եւ ընտրութիւնը կանգ է առնում Յունաստանի Մոռէա երկրամասի վրայ, որը գտնւում էր վենետիկի իշխանութեան տակ:

Ահա այդ բախտաւոր օրուանից հայ իրականութեան մէջ 300 տարի վառուում է այն մեծ լուսատուն, որը կոչուեց Մխիթարեան Միաբանութիւն:

Իսկ 1717 թուականի Սեպտեմբերի 8-ին իր հիմնադրութեան տարեդարձին այն վերջնականապէս հաստատուում էր Ս. Ղազար կղզու բարեբեր հողում:

Այդպիսին էր պատմական իրավիճակը, եւ այսօր, պատմական պատկառելի հեռաւորութիւնից կարող ենք մի հանգամանք վստահօրէն փաստել, որ այն ինչ արուեց այդ երկու շարժումների կողմից, այն սերմերը, որ ցանուեցին, եղան շատ արգասաւոր, յետագայում տուեցին իրենց հրաշալի պտուղները: Արդէն այն ժամանակ հայ իրականութեան մէջ ասպարէզ է իջնում հնդկահայ փոքրիկ գաղթօջախը, որի ներկայացուցիչները սերտ կապեր էին պահպանում եւ Ղարաբաղի մելիքութիւնների, եւ Մխիթարեանների հետ, իր վրայ է վերցնում արեւելեան եւ արեւմտեան շարժումները միացնելու դերը:

Նրանք հասկանում էին երկուսի պակասութիւնները, անջատուածութեան հետեւանքները, հասկանում հոգեւորմտաւոր զարգացման եւ քաղաքական ազատութեան միմեանց միացնելու, եղբայրացնելու կենսական անհրաժեշտութիւնը եւ կարեւորութիւնը:

Հսկայական է Մխիթարեան Միաբանութեան դերը մեր ժողովրդի հոգեւոր-մշակութային կեանքում:

Վստահօրէն կարելի է ասել, որ մի ամբողջ դար, մինչեւ 19-րդ դարի կէսերը հայ իրականութեան մէջ այն բացառիկ հաստատութիւնն էր, որ կենարար լոյս ու գիտութիւն էր պարգեւում մեր ժողովրդին, մի անբեւեակայելի բեղմնաւոր գործունէութեամբ Ս. Ղազարը դարձաւ այնպիսի երեւոյթ, որի նմանը չի տեսել մեր պատմութիւնը:

Անգնահատելի է Միաբանութեան մշակութային դերը մեր ժողովրդի պատմութեան մէջ: Մխիթար Աբբահայրը եղաւ եկեղեցու այն առաջին հիմնադիրներից, որ ազգային մշակութիւնը դարձրեց առաքելութեան գլխաւոր նպատակ: Բացի այն, որ երեք դար շարունակ անխոնջ մեղուի պէս ստեղծել են հոգեւոր-մշակութային արժէքներ, Միաբանութիւնը իր վրայ է վերցրել նաեւ հայ մշակութային արժէքների հաւաքման եւ պահպանման առաքելութիւնը, եւ այն նուիրուածութիւնը, որով Մխիթարեանները կատարեցին այդ գործը պարզապէս կարելի է անուանել մշակութային խիզախութիւն եւ հերոսութիւն:

Դեռևս Միաբանութեան հիմնադրման օրուանից Մխիթար Աբբահայրը պատուիրում էր Մխիթարեան Հայրերին, որ ամէն տեղ փնտոեն եւ որտեղ հանդիպեն Հայկական ձեռագրերի եւ մատենաների, ամէն գնով բերեն եւ տեղափոխեն մենաստան: Եւ հոգեւոր Հայրերը այդ գործում կանգ չեն առել ոչ մի զոհողութեան առջեւ:

Բնորոշ մէկ օրինակ: Հայր Ներսէս Սարգիսեանը, որ պատրաստում էր պատմական Հայաստանի ազգագրական եւ աշխարհագրական վիճակագրութիւնը, քրդական գիւղերից մէկում հիւրընկալուելով քուրդ բեկին, նկատում է, որ ջրի ամանի վրայ որպէս կափարիչ դրուած է Հայկական մի ձեռագիր Ս. Եւսեբիոս Կեսարացու «Քրոնիկոնը»: Հայր Ներսէսը, սկսած հագուստներից, ամէն ինչ տուել է բեկին եւ ձեռագիրը հասցրել Ս. Ղազար:

Թերեւս ձեռագրեր հաւաքելու նմանատիպ աշխատանքի արդիւնքն է, որ Ս. Ղազարը, Մատենադարանից յետոյ Հայկական ձեռագրերի մեծագոյն հաւաքածու ունեցող կենտրոնն է:

Բազմաբնոյթ ու բազմակողմանի է Մխիթարեանների մշակութային արժէքների հաւաքածուն, շնորհիւ որի այն դառնում է եզակի մշակութային հաստատութիւն:

Միաբանութիւնում է գտնուում հնատիպ գրքերի արժէքաւոր հաւաքածուն, սկսած առաջին հայ տպագիր Յակոբ Մեղապարտի «Ուրբաթագրքից»: Պատմական մեծ արժէք ունեն արխիւային նիւթերը:

Թերեւս բացառիկ ու գրեթէ կատարեալ է Հայ պարբերական մամուլի հաւաքածուն: Եզակի է Հայ միջնադարեան յուշարձանների արձանագրութիւնները: Մխիթար Սեբաստացու յանձնարարականով միաբանների կողմից ոչ միայն ցուցակագրուել ու չափագրուել են Արեւմտեան Հայաստանի միջնադարեան յուշարձանները, այլեւ նրանց վրայ եղած արձանագրութիւնները:

Մեծ արժէք ունեն եկեղեցական ոսկեայ եւ արծաթեայ սպասքները, Հայկական յախճապակեայ հազուադիւտ հաւաքածուն:

Ուշագրաւ ու ինքնատիպ է Հայ տպագրական առարկաների եւ գործիքների հաւաքածուն, ազգագրական նիւթերը եւ կիրառական արուեստի նմոյշների հաւաքածուները:

Հարուստ ու ինքնատիպ է նաեւ գեղանկարների հաւաքածուն, որոնց մէջ իր արժէքներով առանձնանում են Յովհաննէս Ալվազովսկու շուրջ 15 ստեղծագործութիւնները:

Պատկերը ամբողջական լինելու համար նշենք, որ Միաբանութիւնը տնօրինում է նաեւ ոչ հայկական մշակութային գանձերի:

Մխիթարեան Միաբանութիւնը մեր պատմութեան մէջ մնայուն տեղ ունի որպէս մատենագիտական եւ հրատարակչական հաստատութիւն: Մինչեւ 1700թ. հայ գրքի տպագրութիւնը հաշոււմ էր շուրջ 180 անուն գիրք սկսած 1512 թուականից, իսկ միաբանութիւնը մինչեւ Աբբահօր մահը արդէն հրատարակել էր 55 անուն գիրք: Միաբանութիւնը հայ տպագրական արուեստը բարձրացրեց նոր աստիճանի եւ, ամենակարեւորը, Մխիթարին յաջողուեց կազմակերպել հրատարակչական խմբակային աշխատանք:

Մխիթարը եւ իր Միաբանութիւնը բոլորովին նոր խօսք ասեցին հայ տպագրութեան մէջ եւ ասպարէզ բերեցին այնպիսի մեծագործութիւններ, որոնք պէտք է առաջացնէին բոլորի հիացմունքը, հայ հրատարակչական արուեստը հասցնելով որակական նոր մակարդակի:

1733թ. Աբբահայրը Բորթոլիի տպարանից դուրս հանեց իր հրատարակած Աստուածաշունչը: Դա մի աննախադէպ, սքանչելի գործ էր: Աբբահայրը ոչինչ չէր խնայել այն փառահեղ դարձնելու համար՝ պղնձի վրայ քանդակած նուրբ պատկերներ, գեղեցիկ ծաղկագրեր, մաքուր տպագրութիւն՝ թանկարժէք թղթի վրայ: Այն մեր իրականութեան մէջ յայտնի է որպէս «Աբբայի Աստուածաշունչ» անուամբ:

1749թ. լոյս աշխարհ է գալիս հայ հոգեւոր-մշակութային գոհարներից մէկը՝ «Հայկազեան բառարանը», որը մի դարագլուխ է մեր գրականութեան մէջ: Ամէնից առաջ այն հիմնաւորապէս հաստատում էր այն, որ Ս. Ղազարում գիտեն աշխատել հաւաքական ոյժերով, յամառ տոկունութեամբ, հիմնաւոր, գիտական պատրաստուածութեամբ:

Գործը սկսուել էր 1722թ. եւ ընդհատումներից յետոյ աւարտուեց 1745թ.: Այդ տարիներին Մխիթարը եւ իր աշակերտները ստեղծեցին մի հարուստ բացատրական բառարան, որն իր նախադէպը չունէր, եւ որի արժէքը ուղղակի անգնահատելի է:

Բառարանի հրատարակութիւնը Մխիթարեանների համար ունենում է մէկ այլ կարեւոր նշանակութիւն, այն կատարեալ եւ վերջնական յաղթանակ էր, Միաբանութեան անսահման, բարձրագոյն հեղինակութեան հաստատում: Աստուածաշունչը եւ Հայկազեան բառարանը Աբբահօր անձեռակերտ կոթողներն են:

Խօսել Միաբանութեան մատենագիտական հրատարակչական գործունէութեան մասին, անհնարին է հիացմունքով չլիշատակել հայ պարբերական մամուլի թագն ու պսակը կազմող «Բազմավէպի» մասին:

Այն եզակի է իր տեսակի մէջ, միակ հայ պարբերականն է, որ իր հիմնադրման օրուանից հրատարակուեալ է մինչեւ օրս: Շնորհիւ Գաբրիէլ Այվազովսկու եւ մի խումբ խանդավառ միաբանների խիզախ եւ հերոսական ջանքերի, սեփական նախաձեռնութեան նկատմամբ ունեցած ազգային կարեւորութեան գործի խորը գիտակցութեան, 1843թ. Մայիսին լոյս աշխարհ եկաւ «Բազմավէպը» եւ, ինչպէս պարզուեց յետոյ, այն դարձաւ մեր մշակոյթի կոթողներից մէկը, յիշուի, դառնալով մեր ժողովրդի հոգու եւ մտքի պատմութեան ոսկեգօծ էջը:

Անգնահատելի ու վիթխարի է Միաբանութեան կրթա-ուսումնական գործունէութիւնը: Մխիթարեան ուսումնական հաստատութիւնները եղել են լոյսի ու գիտութեան այն աղբիւրը, որը երեք դար շարունակ ողողում է հայ իրականութիւնը:

Երկար կարելի է խօսել միաբանութեան գործունէութեան մասին, այն հսկայածաւալ աշխատանքների մասին, որ Միաբանութիւնը կատարել է գիտութեան, կրթութեան, պատմագիտութեան, հայագիտութեան, թարգմանութեան եւ այլ բնագաւառներում: Եւ յուսով եմ, որ այս օրերին հանգամանալից կը խօսուի դրանց մասին:

Բնականաբար այսօր խօսել եւ անդրադառնալ Միաբանութեան մասին, անհնարին է չանդրադառնալ նրա հիմնադիր՝ Մխիթար Սեբաստացու դիւցազնական կերպարին:

Մխիթար Աբբասյոյր մեզ է ներկայանում որպէս Հայ Վանականի, Հոգեւորականի, Առաքելի, Հայրենասէրի, Գիտնականի, Հրատարակչի, Մատենագրի, Դաստիարակի բացառիկ տիպար, որը աղօթեց, նուիրուեց, գործեց, ստեղծեց, թարգմանեց եւ հրատարակեց յանուն հայ ազգի հոգեւոր զարթօնքի, նրա զարգացման եւ բարգաւաճման:

Ես, կ'ուզենայի անդրադառնալ առանձնապէս Սեբաստացի դիւանագէտին: Չնայած նրա կենսագիրների, եւ նրա կերպարին անդրադարձողների մօտ երբեմն շօշափուել է նրա դիւանագիտական կարողութիւնների դրսեւորման մասին, բայց այն մինչեւ օրս Մեծ Աբբահօր չուսումնասիրուած եւ չգնահատուած կողմերից է, ինչպէս նրա գործունէութեան նաեւ այլ բնագաւառները:

Թերեւս հարց առաջանայ, ի՞նչ կապ կարող է ունենալ հոգեւորական առաջնորդը, Միաբանութեան ղեկավարը՝ դիւանագիտութեան հետ: Հարկ եմ համարում նշել, որ Սեբաստացին ոչ թէ՛ դիւանագէտ էր զբաղմունքով ու կոչումով, այլ իր գործունէութեան ձեւերով, բոլոր խնդիրները դիւանագիտական կարողութիւններով եւ հմտութիւններով հարթելու անզուգական տաղանդով:

Մի փոքր շեղուելով նշեմ, որ մեր ժողովրդի պատմութեան մէջ նա այն բացառիկ ազգային գործիչներից էր, որը իր վրայ վերցրած խնդրի լուծումը, առաքելութիւնը իրականացնում էր մարդկային, հասարակական-քաղաքական յարաբերութիւնների, ժամանակի, միջավայրի, ռեալ իրականութեան բոլոր հանգամանքների վերլուծման եւ հաշուառման, դիւանագիտական հմտութեամբ, նրբութեամբ ու ճկունութեամբ:

Այդ է վկայում նրա ողջ գործունէութիւնը, սկսած Կ. Պոլսից մինչեւ իր կեանքի վերջը: Իբրեւ խոշոր երեւոյթ, բնականաբար Մխիթարեան Միաբանութիւնը շատ վէճերի եւ պայքարի առարկայ պէտք է դառնար եւ եթէ՛ մտովի տեղափոխուենք այն պատմական ժամանակաշրջանը, երբ կատաղի պայքար էր գնում հայ լուսաւորչականների եւ կաթողիկոսների միջեւ, միանգամայն պարզ կը դառնայ, այն իրավիճակը, որի պայմաններում Մխիթարը եւ նրա միաբանները գործեցին, պայքարեցին եւ հաստատուեցին:

Այդ դաժան պայքարի պայմաններում, հիանալի ըմբռնելով իրավիճակը, նա հակամարտութեան չզնայց, այլ ընտրեց հաշտութեան, համբերատարութեան, փոխըմբռնման ճանապարհը, բոլոր վէճերը տեղափոխելով մտքի, մշակոյթի, գրականութեան, գիտութեան ասպարէզ: Դրանք այն հզօր միջոցներն էին, որոնցով հնարաւոր էր յաղթահարել սոցիալականութիւնը, հեռացնել անհանդուրժողականութիւնը, հայ ազգին հեռու պահելով անտեղի եւ իմաստագոլրկ գոտուութիւններից:

Յիրաւի, դա անսխալ ուղի էր, անխորտակելի գէնք: Հարիւրաւոր տարիների ընթացքում Ս. Ղանդարից ճառագում էր լոյս եւ աստիճանաբար հայ իրականութեան մէջ Միաբանութիւնը դառնում էր տիրապետող եւ անգամ, նրա ամենամոլեռանդ հակառակորդները, Մխիթարեանների գրքերը համարում էին իրենց տան զարդը, կարգում, ուսումնասիրում էին դրանք եւ այդպիսի գրքեր հրատարակողներին համարում յարգանքի ու պատուի արժանի հայեր:

Մխիթար Աբբահայրը եւ Մխիթարեանները կարողացան դառնալ մեր ժողովրդի մտաւոր գինակիցը, յենարանը եւ հեղինակութիւնը, եւ ըստ էութեան այն դարձաւ եւ հաստատուեց իբրեւ մի իւրատեսակ Ակադեմիա մեր ժողովրդի համար, որին աստիճանաբար յարմարուեց, ընդունեց, հպատակուեց հայ ազգը:

Աբբահայրը դարձել էր այնպիսի հեղինակութիւն, որ կաթողիկէ կարդինալներէից մի քանիսը նրան արժանի էին համարում անգամ պապական դահլի համար:

Աբբահայրը վախճանուեց շտեմնելով իր մտքի եւ հոգու հրաշքը՝ Հայկազեան բառարանը, բայց նա հեռանում էր հանգիստ խղճով, իրենից յետոյ թողնելով ապահով մի օթեւան, որի մէջ պէտք է թեւածէր հայ ոգին եւ փայլատակէր հայ միտքը: Երջանիկ էր Մխիթարը ժառանգների կողմից, որոնք վառ պահելով Մեծ Աբբահայր Ոգին, բազմացրին, զարգացրին Ս. Ղազարը, այն դարձնելով մեր մշակոյթի անձեռակերտ գանձերից մէկը:

Եւ այսօր՝ Միաբանութեան հիմնադրման 300-ամեակի հանդիսութեան օրը մեծագոյն յարգանքի տուրք տալով Մխիթար Աբբահայրը, հարկ եմ համարում նաեւ յարգանքի տուրք տալ այն բոլոր Աբբահայրերին, որոնց ղեկավարման տարիներին միաբանութիւնը դիմացել է ժամանակի քննութեանը, ապրել ծայրաստիճան դժուարին ժամանակներ, բայց պահպանել իր Ոգին, հաւատարիմ մնացել իր առաքելութեանը, երբեք չի դադարել գործելուց, տքնանքով ու քրտնաջան գործունէութեամբ հարստացրել մեր ժողովրդի հոգեւոր-մշակութային կեանքը, ոսկէ էջեր գրելով մեր մշակոյթի տարեգրքում:

Իսկ այսօր ես առանձնապէս ցանկանում եմ շնորհաւորել վերամիաւորուած Միաբանութեան ընդհանուր Աբբահայր Հայր Եղիա Վրդ. Քիլաղպեանին, որին ոչ միայն բախտ է վիճակուել լինել վերամիաւորուած միաբանութեան առաջին Աբբահայրը, այլեւ իր ուսերին կրել այն վիթխարի պատասխանատուութիւնը, որ իր հետ բերում է այն:

Ուստի, սիրելի Աբբահայր, Ձեզ մաղթում եմ ամենայն բարիք եւ յաջողութիւններ, ցանկանալով ոյժ ու կորով, Մխիթարեան իմաստութիւն, մեր ժողովրդի հոգու եւ մտքի այս անձեռակերտ կրթողը՝ Մխիթարեան Միաբանութիւնը պահպանելու եւ զարգացնելու, Մխիթարեան Ոգին ու նուիրուածութիւնը վառ պահելու, ի փառս եւ ի հպարտութիւն եւ մեր ժողովրդի:

*Միրելի հայրենակիցներ,*

Բնականաբար յոբեկեանական արարողութեանը նուիրուած իմ համառօտ ելոյթում, թերեւս, հնարաւոր չէր անդրադառնալ Միաբանութեան վիթխարածաւալ գործունէութեան բոլոր կողմերին եւ ուղղութիւններին, տալ միաբանութեան ներքին եւ արտաքին կեանքի լիարժէք գնահատականը, ներկայացնել Միւթարեան հոգեւոր-գաղափարական ամբողջութեան բոլոր կողմերը:

Այս օրերին շարունակ հնչելու են «Միւթարեան Ոգին», «Միւթարեան Կոչում», «Միւթարեան Աշխատանք», «Միւթարեան Դեր», «Միւթարեան Ինքնութիւն» եւ համանման այլ մտքեր, որոնք բոլորը միասին վերցրած կազմում են մէկ ընդհանուր գաղափարախօսութիւն, աշխարհայեացք, հոգեւոր-մշակութային ինքնատիպ արժէք եւ կազմում այն հրաշագործութիւնը, որը կոչուած է Միւթարեան Միաբանութիւն:

Սակայն, այնուամենայնիւ կ'ուզենայի անդրադառնալ Միւթարեանների ինքնութեան, ազգային նկարագրի մէկ կողմին, որը կոչուած է հայրենասիրութիւն:

Բացառիկ ու ինքնատիպ է Միւթարեան հայրենասիրութիւնը, այն ինքնամոռաց է, խոհուն, հաստատակամ, լի սեփական արածի կարեւորութեան արժանապատիւ գիտակցութեամբ, հեռու արտաքին շղարշներից, ինքնազոյլութիւնից եւ ցուցամոլութիւնից:

Արդէն՝ միաբանութեան ստեղծման ողջ գաղափարական հէնքը հայ ժողովրդի լուսաւորութեան եւ ոգու վերազարթօնքն էր, որին ամբողջովին նուիրուեցին Միւթարեանները: Հայրենասիրութեան, հայ ժողովրդի բացառիկ նուիրուածութեան անզուգական օրինակ էր Միւթարեանների ողջ գործունէութիւնը սիրոյ, պաշտամունքի մի իսկական սքանչելի ներբող՝ նրա հայրենասիրական ոգին, որը շլացուցիչ իմաստութեամբ ու պարզութեամբ ամփոփուած է Հայկազեան բառարանի առաջաբանում Սեբաստացու հետեւեալ տողերում.

«Պոնարհ սրտով քեզ եմ՝ նուիրում, ով հայ ժողովուրդ, իմ երկար տարիների աշխատանքիս պտուղը, իբրեւ սիրոյ ձօն: Սրտագին տենչում եմ, իմ վաստակ քեզ պարգեւելու, որովհետեւ ինչ որ իմս է, այն քեզ է պատկանում, եւ ինչ որ քոնն է, այն էլ իմս է: Այդ պատճառով ինձ համար պարծանք է քեզ ծառայել, որովհետեւ ի սկզբանէ ի վեր, ինչպէս ես, այնպէս էլ Միաբանութիւնը կոչուած է հայ ժողովրդի մշակոյթին ծառայելու»:

Ծառայել հարազատ ժողովրդին, նպաստել նրա հոգեւոր-մշակութային վերազարթօնքին ու բարդաւաճմանը, պահպանել նրա աւանդոյթները եւ նկարագիրը, վերականգնել եւ զարգացնել նրա լեզուն, սերունդներին կրթել եւ դաստիարակել ազգային, բարոյական եւ գիտութեան լոյսով:

Հայրենասիրութիւնը եւ ազգասիրութիւնը այսպէս ըմբռնելը աստուածային առաքելութիւն էր, որը առինքնող դրօշի նման 300 տարի ծածանւում է Մխիթարեան վանքի վրայ:

Մխիթարեան Միաբանութեան Հայրենասիրութիւնը անբաժան է Հայկականութիւնից:

Մխիթարը հոգ էր տարել, որպէսզի Միաբանութիւնը լինի հայ ծէսով, ժամերգութեամբ, պատարագով, ծիսական մատեաններով, ծիսական տօներով ու պահօքով, եւ յատկապէս միաբանների կազմով, որոնք բաղկացած պէտք է լինէին միայն հայերից:

Միաբանութեան Հայրենասիրական եւ Հայկականութեան այս դիմադիծը այնքան խորը ու ցայտուն է, որ նոյնիսկ ժամանակին եղել են անհատներ, որոնք չկարողանալով թափանցել Միաբանութեան գաղափարական էութեան, համոզմունքների ու սկզբունքների մէջ, նրանց կայցրել են «ազգայնամոլութեան» զանազան պիտակներ: Միաբանութեան այդ ոգեշնչումը, Հայրենասիրութիւնը, Հայկականութիւնը բխում էր հարազատ ժողովրդի նկատմամբ տածած անսահման սիրուց, նրա արժանիքների նկատմամբ ունեցած հպարտութիւնից, նրա վիճակը բարելաւելու, կարիքները հոգալու անձնուէր նուիրումովութիւնից, որը կոչւում է «Հայկական Ոգի»:

Թանկագին եղբայրներ,

Աւարտելով խօսքս, թոյլ տուէք մէկ անգամ եւս շեշտել, որ շնորհիւ աներեւակայելի բեղուն գործունէութեան Ս. Ղազար կղզին արդէն 300 տարի վերածուել է փոքր Հայաստանի՝ նրա պէս հայկական: Իր ոգով եւ նկարագրով, այն դարձել է, յիբաւի, մի սքանչելի Հայոց Տուն, արժանացել Հայոց բոլոր մեծամեծների հիացմունքին ու դրուատանքին, մեր ժողովրդին պարգեւելով Մխիթար Սեբաստացի, Գաբրիէլ Այվազովսկի, Ալիշան, Չամչեան եւ այլ մեծագոյն գործիչներ:

Եւ որքան իրաւացի էր Արշակ Չոպանեանը, երբ գրում

էր. «...Ոչ մի հայկական հաստատութիւն, այնքան խորունկ եւ տեւական ազդեցութիւն չի ունեցել Հայոց վրայ, որքան Մխիթարեան Տունը»:

Ուստի մաղթում եմ, որ ընդմիջտ չէն ու բարգաւաճ մնայ այդ Տունը եւ մշտապէս հուրհրայ Հայոց կրակը, լոյս ու բերկրանք պարգեւելոյ Հայ ժողովրդին:

ՄԽԻԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ ԸՆԴՀ. ԱԲԲԱՀԱՅՐ  
 Հ. ԵՂԻԱ Ծ. ՎՐԴ. ԳԻԼԱՂՊԵԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ  
 ՄԽԻԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ  
 300-ԱՄԵԱԿԻ ԲԱՑՄԱՆ ՀԱՆԳԻՍՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԱՌԻԹՈՎ  
 ԽՕՍՈՒԱԾ Ս. ՂԱԶԱՐ ՄԱՅՐԱՎԱՆԳԻ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՁ  
 ՎԵՆԵՏԻԿ, 10 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2000ԻՆ

**Discorso dell'Abate Generale della Congregazione Mechitarista P. Elia Kilaghbian durante l'inaugurazione delle festività giubilari del 300esimo della fondazione della Congregazione Mechitarista, 10 settembre 2000, San Lazzaro, Venezia.**

Eminentissimi ed eccellentissimi vescovi ed arcivescovi, Signor ministro, gentili autorità, fratelli e sorelle.

Ringrazio di aver accolto l'invito della nostra comunità a partecipare la gioia del trecentesimo della sua fondazione ad opera di Mechitar di Sebaste, avvenuta in Costantinopoli, oggi sono 300 anni.

Questo anniversario si intreccia felicemente con i 1700 anni di cristianità dell'Armenia e proprio nell'anno 1700 Mechitar diede forma allo strumento della sua missione al servizio della cristianità e della cultura del popolo dell'Armenia.

Infatti la fede e la sete di conoscenza sono nate insieme alla storia del popolo armeno. Sin dal IV° secolo dell'era cristiana la cultura

armena si irradiò dai centri religiosi cristiani, ed i primi esempi di questa cultura scaturirono dalla fonte della fede. Nei monasteri dell'Armenia fede e cultura sono elementi inscindibili di quel processo di elevazione dello spirito umano verso il divino.

La Congregazione Mechitarista, dotata di una vocazione particolare come istituto religioso monastico, fin dalla sua nascita nell'anno 1700, è rimasta fedele a questa tradizione. I suoi componenti, insieme con la salvaguardia e la diffusione della tradizione ecclesiale armena, si sono impegnati con grande dedizione a vivificare la tradizione culturale.

L'abate Mechitar fondò la sua congregazione per illuminare nello spirito e nella conoscenza il popolo armeno. Questa missione fu lo scopo principale della sua esistenza.

Mechitar aveva un destino ed una missione particolare di cui egli era consapevole: salvaguardare l'identità del suo popolo. Per questo nuovo edificio prese i due fondamenti che da sempre lo avevano distinto: la fede cristiana e la sete di conoscenza.

Mechitar sperimenta e comprende la condizione del popolo armeno, e progetta di dare un significato alla sua storia. Ma questo significato, per essere efficace, deve entrare nella storia personale di ogni armeno, deve cambiare la sua vita, condurlo ad un intimo convincimento.

Così la perdita dei valori fondanti di un popolo: una terra, una nazione, delle leggi proprie in cui sentirsi società piena ed indipendente, può essere sostituita da una fede matura nella propria storia e nella propria cultura.

Il popolo armeno esiste senza dominare, senza regnare, senza alterare od offendere la storia di altri popoli. Questo è possibile, deve essere possibile per tutti i popoli.

Strumento della redenzione dei popoli è la conoscenza.

Lo studio e la diffusione della cultura aiutano a conoscere se stessi e a non temere gli altri, devono familiarizzare con la diversità e difendere la propria identità e l'altrui.

Questo è il motivo principale per cui bisogna divulgare il suo messaggio attraverso le arti, le lettere e le scienze.

Nella sua visione nuova del mondo il rafforzamento dell'identità nazionale deve servire a meglio vivere il presente, a meglio rac-

cogliere i frutti della creazione, ad aprirsi senza timori al mondo. Per lui riconoscersi nei propri valori e dare fiducia e strumenti ai propri figli, significa affidarsi fiduciosi al progetto di Dio.

Egli, la cui visione è oltre la storia e la cui missione è finalizzata all'eternità, accetta le contraddizioni del vivere umano come inevitabili prove le quali rivelano sia il nostro desiderio di lottare sia l'intensità della nostra preghiera.

Il mondo oggi ha ancora bisogno di questi valori: amore e rispetto; tolleranza ed identità; lode a Dio e promozione della persona umana; accettazione di valori assoluti e tentativo di costruire un presente ricco di doni per tutti.

Questi valori trovò Mechitar di Sebaste nel seno della Chiesa e del popolo veneziano quando sbarcò nella laguna nel 1715.

Questi valori la congregazione mechitarista intende continuare a testimoniare con il suo impegno e trasmettere alle future generazioni.

La missione che in questi trecento anni la Congregazione ha condotto tra il disperso popolo armeno trova oggi nuova speranza nella rinata patria Armenia. Riproponendo la memoria storica e vivificando le sue radici, la Congregazione guarda all'Armenia per ritornare alla fonte della sua ispirazione. Così che l'esilio che l'Abate Mechitar condivise con il suo popolo perseguitato, si trasformi ora in un incontro.

Per questo la Congregazione Mechitarista accoglie con filiale e viva gratitudine la paterna sollecitudine con cui Sua Santità Giovanni Paolo II sostiene il suo cammino, ed il fraterno conforto con cui il Patriarcato e la Chiesa di Venezia hanno offerto ed offrono alle fatiche della sua missione.

L'abbraccio fraterno del Patriarcato Cattolico Armeno e di Sua Beatitudine Nerses Bedros diciannovesimo, è da sempre un sicuro rifugio per questa Congregazione. Ad esso e a tutti i suoi eminenti vescovi e a tutti i suoi religiosi vanno i sentimenti di più cara riconoscenza.

La Congregazione Mechitarista si anima per le assicurazioni di paterna e fraterna benevolenza ed accoglienza che Sua Santità Karekin Secondo, Catholicos di Tutti gli Armeni ha inteso rivolgerle.

La Congregazione Mechitarista si sente inoltre incoraggiata dai sentimenti di partecipazione e fratellanza espressi da Sua Santità Aram I, Catholicos della Gran Casa di Cilicia.

Il sostegno e la comprensione che il Governo Armeno ha manifestato e costantemente manifesta, onorano questa Congregazione. Essi ne rafforzano l'azione e fanno guardare con fiducia ad un futuro ricco di doni spirituali per i tutti gli Armeni.

Sono grato inoltre alle autorità del Governo Italiano, della Regione Veneto e della Città di Venezia per l'amicizia e la costante collaborazione dimostrate.

Desidero esprimere un grato pensiero all'Unione degli Armeni d'Italia e alle Associazioni degli Allievi Mechitaristi che in tutto il mondo allargano ed alimentano le fila della famiglia mechitarista. Anche ad essi appartiene il futuro della Congregazione di Mechitar di Sebaste.

Desidero ringraziare tutte le istituzioni culturali nazionali ed internazionali, e tutti gli studiosi che associandosi al lavoro dei Padri Mechitaristi ne hanno arricchito le messi spirituali e culturali.

Un grazie di cuore a tutti coloro che hanno collaborato per celebrare questa festa: Le suore Armene dell'Immacolata concezione ed i reverendi padri e cari studenti del Collegio Armeno Leoniano in Roma.

Desidero infine rivolgere un grato pensiero a tutti gli amici ed i devoti dell'Abate Mechitar che con le loro preghiere continuano a dare forza spirituale alla Congregazione.

Il terzo centenario della Congregazione Mechitarista intende celebrare con gioia il suo Fondatore e tutti i monaci che per trecento anni hanno servito Dio e gli Armeni.

Intende proclamare un annuncio di speranza nella fede in Cristo e nella conoscenza reciproca delle genti e delle culture, frutto meraviglioso della creazione divina.